ԻՇԽԱՆ ԴԱՎԹՅԱՆ
ԵՊՀ դասախոս
ՀՏԴ 82.09

«ԵՐԱԶ» ՊԱՏՈՒՄԱՅԻՆ ՀՆԱՐԻ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Բանալի բառեր և արտահայտություններ. երազային հնար, գործառութային դասակարգում, հրաշապատում երկեր, ապագայագուշակ երազներ, իրականության գաղտնազերծում, հանդերձյալ աշխարհ, զգուշացնող երազներ:

Ключевые слова и выражения: сон как нарративный прием, функциональная классификация, сказки, вещие сны, раскрытие секретов прошлого, потусторонний мир, предостерегающий сон.

Key words and expressions: dream as a narrative device, functional classification, fairy-tales, foreshadowing dreams, uncovering of reality, underworld, warning dreams.

Երազն ու երազատեսությունն իրենց ուրույն տեղն են ունեցել դեռևս վաղ շրջանի գրական ստեղծագործություններում՝ հեղինակներին հնարավորություն տալով վեր հանել հերոսների ներաշխարհն ու անգիտակցականը՝ ազատ տեղաշարժվելով տարածաժամանակային կաղապարներից և օրենքներից զատ տիրույթում: Այն երազները, որոնք տեսնում են գրական հերոսները, ոչ թե ընկալվում են ուղղակիորեն կամ մեկանաբանվում բառացի, այլ վերծանվում են որպես փոխաբերություններ: Հ. Փոչն ու Դ. Վոլդենը գրում են. «Երազները կարող են ինքնաբացատրողական լինել, բայց հաճախ է պատահում, որ դրանց իմաստը տարօրինակ ձևով թաքնված է լինում մակերեսից այն կողմ: Նույնիսկ այդքան թափանցիկ երազները, որ թվում է՝ մեկնաբանման կարիք չունեն, իրականում խորհրդանշում են մեկ այլ բան» (Poch and Walden 2003: 115-116):

Երազը գրական տեքստում առաջին հերթին գործածվում է որպես միավորող հնար: Այն կարող է կապել իրար հետ չառնչվող նյութերը (Hieatt: 1967: 11): Գրական տեքստում հեղինակի ուղերձը շատ հաճախ կկորցնի ցանկալի արդյունավետությունը, եթե այն ասվի ուղղակիորեն, այլ՝ ոչ երազի ձևով (Carol Schreier Rupprecht and Kelly Bulkley 1993: 2): Իսկ գրականգետ Ս. Ֆ. Քրուգերն անդրադարձել է գրականության մեջ երազների ուսուցողական (դիդակտիկ) դերին՝ շեշտադրելով, որ երազները միջոց են՝ ընթերցողին հասցնելու երկի բարոյախրատական ուղերձը (Kruger 1992: 125):

Երազատեսությունն իր վառ դրսևորումն է գտել նաև մանկական երկերում՝ դառնալով փոքրիկ ընթերցողին իրականությունից կտրելու և հեղինակի երևակայական ճամփորդությանը մասնակից դարձնելու միջոց:

Մի շարք գիտակարգերում բազմիցս փորձ է արվել դասակարգել երազներն ըստ գործառույթի, այնուամենայնիվ, երազների գործառութային դաշտը գրականության մեջ և, մասնավորապես հրաշապատում երկերում, գրեթե չի արժանացել մեկնման: Ուստի այն ավելի հստակ պատկերացնելու համար անհրաժեշտություն է առաջանում կատարել երազ պատումային հնարի դասակարգումն ըստ գործառույթի՝ դիտարկելով հրաշապատում գրվածքներում գրական երազի ամենատարածված դրսևորումները: Սույն հոդվածի շրջանակներում անդրադարձել ենք անգլալեզու մանկագրության մեջ երազների հիմնական տեսակներին՝ ըստ դրանց՝ պատումում ունեցած գործառութի՝ փորձելով պարզաբանել վերջիններիս դերը պատումի կառուցվածքային համակարգի մեջ:

Ապագայագուշակ երազներ

«Երազ» պատումային հնարի ամենատարածված գործառույթը այն որպես կանխատեսման միջոց օգտագործելն է: Կանխատեսող երազները կարող են բաժանվել երկու խմբի. երազներ, որ գրական երկում ուղղակի խորհրդանիշեր են՝ ապագա իարդարձությունները կանխագուշակելու համար, և երազներ, որտեղ կան աստվածային կամ երկնային էակներ, որոնք ինչ-որ բան են զգուշացնում կամ կարգադրում և դրանով նպաստում սյուժեի զարգացմանն ու ստեղծում դրամատիկ լարվածություն: Ապագայագուշակ երազները հերոսին տալիս են ապագա իրադարձությունների վերաբերյալ տեղեկություններ, որ այլ կերպ ձեռք բերել հնարավոր չէ: Այդ երազները միշտ ճշմարիտ են, բայց և այնպես կարող են հերոսի կողմից սխալ հասկացվել, ասենք, ընկալվել որպես անցյալի արտացոլք: Գրական ստեղծագործություններում ապագայագուշակ կամ խորհրդանշական երազները ուղարկվում են աստծու, մարգարեի, պայծառատեսի կողմից, կամ էլ հերոսն է օժտված լինում գուշակելու ձիրքով, բայց հաճախ նա կարող է գլխի չընկնել, որ տեսած երազները պետք է իրար կապել: Սակայն ինչ-որ պահի դա գիտակցում է, ամբողջացնում այդ ամենը, և նրա համար պարզ են դառնում գալիք իրադարձությունները:

Օրինակ Ջ. Ք. Ռոուլինգի «Հարրի Փոթերը և գաղտնիքների սենյակը» սկսվում է գալիք մարտահրավերները կանխագուշակող հետևյալ կարևոր երազով, որին Հարրին արհամարհանքով է վերաբերվում.

“Mind spinning over the same unanswerable questions, Harry fell into an uneasy sleep. He dreamed that he was on show in a zoo, with a card reading UNDERAGE WIZARD attached to his cage. People goggled through the bars at

him as he lay, starving and weak, on a bed of straw. He saw Dobby's face in the crowd and shouted out, asking for help, but Dobby called, 'Harry is safe there, sir!' and vanished. Then the Dursleys appeared and Dudley rattled the bars of the cage, laughing at him. 'Stop it,' Harry muttered as the rattling pounded in his sore head. 'leave me alone….cut it out….I'm trying to sleep…" (J.K. Rowling 2000: 23).

Երազում արտաքին ազդակների ներգրավումն ընդունված և ծանոթ երևույթ է: Սակայն վեպում երազի հիմնական գործառույթը այլ խնդիրների վերհանումն է: Հարրիի երազը անմիջականորեն կապված է իր իսկ վիճակի հետ. նրա ենթագիտակցությունը փորձում է համակերպվել անհիմն մեղադրանքների և սենյակում կողպված լինելու հետ: Հարրիի սույն երազը կարծես առաջին գրքում պատկերված կենդանաբանական այգու օձի դրվագի արտացոլանքը լինի: Հեղինակը երազն օգտագործում է որպես համեմատություն՝ զուգահեռ տանելով Հարրիի և օձի միջև, քանի որ երկուսն էլ փակի տակ էին: Հերոսի անգիտակցականում արթնանում է անօգնական օձի կերպարանքը, որին տեսել էր Դրզլիների հետ կենդանաբանական այգի այցելելու ժամանակ: Նրանք երկուսն էլ հեռու էին իրենց հարազատ միջավայրից՝ արժանանալով մագլների[1] անհարգալից վերաբերմունքին: Երկուսն էլ ունեին իրենց՝ մագլ տեսակներին ոչ բնորոշ հատկանիշներ: Հարրիի կախարդական ունակության բացառիկությունը օձերի հետ խոսելն է: Դրանով է բացատրվում տղայի՝ օձերի հետ ունեցած արտասովոր կապը: Գաղտնիքների սենյակը բացելու համար Հարրին պետք է մարտնչեր հսկա արքայօձի (Բասիլիկոս) հետ: Հետաքրքրական է, որ երազում Հարրին Դոբբի էլֆից օգնություն է խնդրում այն դեպքում, երբ նրան միայն մեկ անգամ էր տեսել: Սա կարծես կանխագուշակում է վեպի հետագա զարգացումը. դա այն է, որ Հարրին Դոբիից պետք է օգնություն խնդրի: Հեղինակը երազի միջոցով հերոսի անգիտակցականում նախագծում է նրա հետագա անելիքները: Վանդակի մեջ ցուցադրված լինելը խորհրդանշում է այն պատասխանատվությունը, որ գալիս էր նրա հանրաճանաչ լինելուց: Հետաքրքրական է նաև այն, որ Հարրին նույնիսկ իր երազում է փորձում քնել, այսինքն՝ անգամ նրա անգիտակցականն է փորձում թմրել: Սա վկայում է հերոսի հոգեկան ապրումների խորքայնության մասին:

Իսկ *«ԱՆՉԱՓԱՀԱՍ ԿԱԽԱՐԴ»* մեծատառերով գրությունը ուղղակի կերպով արտացոլում է այն բոլոր մարտահրավերները, որը նա պետք է հաղթահարի իր կախարդանքի ուժով: Գրաֆոլոգիայի մակարդակում

[1] Հարրի Փոթերի մասին վիպաշարում *մագլ* են համարվում ոչ կախարդ արարածները:

գլխագիր տառերի կիրառությունը միտված է իմաստային շեշտ հաղորդելու որևէ մտքի, այն ավելի տեսանելի դարձնելու ընթերցողի համար: Այն համարժեք է որևէ բառի իմաստային շեշտին արձակ խոսքի մակարդակում: Հեղինակը տեքստային տեսողական հնարի միջոցով ընդգծում է, թե ինչպես է հերոսի մոտ մեծանում կախարդական ուժին տիրապետելու զգացողությունը, որը նա չէր կարող կիրառել մինչև չափահաս դառնալը:

Իրականությունը գաղտնազերծող երազներ

Ինպես նշում է հոգեբան Դ. Բարրեթը. «…որոշ երազներ գաղտնազերծում են թաքնված ճշմարտություն, իսկ որոշները պարզապես աղմկում են»: (http://www.webmd.com/balance/news/20090219/do-dreams-reveal-hidden-truths) Ինչպես իրական կյանքում, այնպես էլ հեքիաթային աշխարհում անրջային տեսիլքների մեկ այլ կարևորագույն գործառույթը նաև իրականության գաղտնազերծումն է: Երազային հնարի միջոցով հեղինակը վեր է հանում հերոսների համար կարևոր նշանակություն ունեցող փաստեր, որն այդ պահին այլ կերպ հնարավոր չէ պարզել:

Հերոսը երազում երբեմն կարող է տեսնել վաղ անցյալում կատարված իրադարձություններ[2], նույնիսկ, եթե երազատեսն ինքն այդ իրադարձությունների ականատեսը չի եղել: Այդպիսի երազները շատ հաճախ անհասկանալի են և, միևնույն ժամանակ, դրանցից խուսափելն անհնար է: Դրանք սովորաբար անցյալի մասին տալիս են ճշգրիտ տեղեկություններ:

Անդրադառնալով ռոուլինգյան վիպաշարին՝ նշենք, որ Հարրիի երազային վերապրումի ամենակարևոր դրվագներից մեկին հանդիպում ենք «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» գրքի հենց սկզբում: Նա արթնանում է մի փոքրիկ խորդանոցում, որտեղ տասը տարի նրան թաքցրել էին բարեկամները: Արթնանալով՝ փորձում հիշել իր տեսած երազը.

"Harry woke with a start. His aunt rapped on the door again.

"Up!" she screeched. Harry heard her walking toward the kitchen and then the sound of the frying pan being put on the stove. He rolled onto his back and tried to remember the dream he had been having. It had been a good one. ***There had been a flying motorcycle in it. He had a funny feeling he'd had the same dream before****".* (J.K. Rowling 1999: 19)

Մեքենայով դեպի կենդանաբանական այգի ուղևորվելիս տղան իր երազը պատմում է Դրզլիներին: Պարոն Դրզլին, որը վեպում

[2] Երազների այս խումբը կարող ենք պայմանականորեն անվանել *«հետահայաց երազներ»:*

երևակայությանը հավանություն չտվող մեկն է, բարկացած բղավում է, որ մոտոցիկլետները չեն թռչում, և դա լոկ երազ է եղել:

Հարրին դեռ չգիտեր, որ կախարդված մոտոցիկլետները, իհարկե, թռչում են, և տասը տարի առաջ հենց այդ թռչող մոտոցիկլետն է իրեն բերել Դրզլիների տուն: Սակայն այս երազը այնքան էլ անսովոր չէ Հարրիի համար: Ինչպես Յունգն է նշում, «Տեսականորեն անձի կյանքի նախկին փորձությունների ամբողջությունը կարելի է գտնել երազում» (Jung 1974: 26): Հարրիի այս կրկնվող երազներն ուղղակի երազ չէին, այլ հուշում՝ նրա անցյալի մասին՝ չնայած այն բանին, որ Հարրիի բարեկամները ջանք չէին խնայում ջնջել նրա անցյալին առնչվող ամեն ինչ: Այս երազը բոլոր յոթ վեպերում առկա կախարդական աշխարհի անսահման հնարավորությունների և այդ հնարավորությունների գոյությունը համառորեն ժխտող Դրզլիների միջև լարվածության նախասկիզբն է:

Երազը հանդերձյալ աշխարհի հետ կապի միջոց

Երազը գրականության մեջ նաև ռճական հնար է, որի միջոցով կապ է ստեղծվում որևէ մահացած կերպարի հետ (Goldberg 1983: 21) Ըստ Դ. Բարրեթի՝ երազներում մահացածներն ի հանյտ են գալիս չորս հիմնական նպատակով. մահվան վիճակը նկարագրելու, իրենց մահվան հանգամանքները փոխել փորձելու, հարազատներին իրենց ևս մեկ անգամ տեսնելու հնարավորություն տալու կամ նրանց որևէ կարևոր ուղերձ փոխանցելու համար (Barrett 1991: 107).

Այսպիսի երազները մեծ մասամբ մարգարեական են և հաճախ ունեն կրոնական համատեքստ, ինչպես, օրինակ՝ Չ. Դիքենսի «Մանկան երազը աստղի մասին» երկը:

Հեքիաթային պատումի հիմքում ընկած է քրոջ և եղբոր միջև հոգևոր խորը կապը: Մանուկներն արժևորելով բնության յուրաքանչյուր տարր՝ ամեն գիշեր անհամբերությամբ սպասում են լուսափայլ աստղի հայտնվելուն, իսկ քնելուց առաջ միշտ օրհնում են այն: Սակայն քույրն օրեցօր թուլանալով մահանում է, և տղան մի երազ է տեսնում. այն նույն լուսափայլ աստղը ճանապարհ է բացում մարդկանց համար, որոնք վեր են բարձրանում հրեշտակների ուղեկցությամբ: Այնտեղ է նաև քրոջ հրեշտակը:

Now, these rays were so bright, and they seemed to make such a shining way from earth to heaven, that when the child went to his solitary bed, he dreamed about the star; and dreamed that, lying where he was, he saw a train of people taken up that sparkling road by angels. And the star, opening, showed him a great world of light, where many more such angels waited to receive them.

All these angels who were waiting turned their beaming eyes upon the people who were carried up into the star; and some came out from the long rows

in which they stood, and fell upon the people's necks, and kissed them tenderly, and went away with them down avenues of light, and were so happy in their company, that lying in his bed he wept for joy.

But there were many angels who did not go with them, and among them one he knew. The patient face that once had lain upon the bed was glorified and radiant, but his heart found out his sister among all the host (Dickens 1871).

Շատ ժամանակ է անցնում. տղան հերթով կորցնում է իր հարազատներին և ամեն անգամ երազում տեսնում է նույն աստղը, որի բացած նույն լուսափառ ճանապարհով հեռանում են հարազատները: Այստեղ աստղը երկրայինի և երկնայինի միջև կապն է, որը ցույց է տրվում երազի միջոցով: Եվ տղան իր երազներից հասկանում է, որ ինքը պատկանում է և՛ երկրին, և՛ աստղին: Գալիս է նաև նրա՝ կյանքին հրաժեշտ տալու ժամը: Եվ մինչ մահը վրա կհասներ, նա ասում է, թե ինքը տեսնում է աստղը:

Հեքիաթում երազային հնարի միջոցով հեղինակը ցույց է տալիս, որ Աստվածն է այս զարմանահրաշ բնության և մարդու արարիչը, և որ վերջիններս Աստծու զավակներն են: Երազային հնարի միջոցով է ընդգծվում նաև հետմահու կյանքի գաղափարը, իսկ աստղն այնտեղ տանող ճամփան է:

Զգուշացնող երազներ

«Հարրի Փոթերը և խառնածին արքայազնը» վեցերորդ գիրքը սկսում է Ռոնիի փոքր քրոջ՝ Ջինիի մասին երազով: Սա ընթերցողին ակնարկում է այն մասին, որ Հարրիի՝ Ջիննիի հանդեպ տածած սերն այնքան էլ պլատոնական չէ: Երազն արտահայտում է Ռոնի դժգոհությունը նրանց մտերմության վերաբերյալ:

"Harry awoke next morning feeling slightly dazed and confused by a series of dreams in which Ron had chased him with a Beater's bat…". (J.K. Rowling 2005: 290)

Նույն գրքի վերջում, երբ Հարրին Վոլդեմորի հետ վերջնական ճակատամարտին էր պատրաստվում, երազի միջոցով տեղեկանում է իրեն սպասվող դժվարությունների մասին: Նա տեսնում է բաժակներ, մեդալիոններ և այլ առեղծվածային իրեր, որոնց ոչ մի կերպ չի կարողանում հասնել: Նրան օգնության է գալիս Դամբլդորը, առաջարկում բարձրանալ պարանե սանդուղքով, որը, սակայն, վերածվում է օձերի հենց այն պահին, երբ Հարրին սկսում է մագլցել:

"His dreams were thick with cups, lockets, and mysterious objects that he could not quite reach, though Dumbledore helpfully offered Harry a rope ladder that turned to snakes the moment he began to climb….". (J.K. Rowling 2005: 603)

Այս երազում հպանցիկ է անդրադարձ կատարվել Հարրիի ներաշխարհին, և առաջին պլանում են արտաքին աշխարհի դժվարությունները. դա մի հուշում է՝ կախարդական իրերը գտնելու առաջադրանքի վերաբերյալ, որը հերոսին հնարավորություն կտա հաղթել թշնամուն:

Խրատական երազներ

Ինչպես արդեն ասվել է, ըստ Ս. Քրուգերի՝ գրական ստեղծագործություններում երազներն ունեն խրատական բնույթ: Այս դեպքում արդեն անրջային տեսարանը կարող է հետևյալ դրևորումն ունենալ. օրինակ՝ ստեղծագործության հերոսներից մեկը կարող է կորցրած լինել կյանքի նկատմաբ ունեցած հետաքրքրությունը և ծաղրել իր ընկերներին՝ երազներին լուրջ նշանակություն տալու համար: Այդ ժամանակ գրական հերոսը երազ է տեսնում, որի միջոցով նրան կարևոր տեղեկություն են հաղորդում և այդ ձևով շարժում հերոսի հետաքրքրությունը՝ շրջապատում կատարվող իրադարձությունների նկատմամբ:

Խրատական երազի վառ օրինակ է ամերիկացի մանկագիր Մ. Սենդակի «Այնտեղ, որտեղ ապրում են հրեշները» մոտ երեքհարյուր բառից բաղկացած նկարազարդ գիրքը: Հեքիաթի հերոսի ճամփորդությունը տեղի է ունենում իրական աշխարհից դեպի այլաշխարհ: Վեպի հերոսը՝ Մաքսը, վատ վարքի համար պատժվում է մոր կողմից, այն է՝ քնել առանց ուտելու: Առաջին հայացքից չարաճճի Մաքսի ճամփորդությունը դեպի հրեշների աշխարհ իրական է թվում, սակայն հենց հեղինակի կողմից կատարված նկարազարդումները ստիպում է դրան նայել որպես մանկան երևակայության արգասիք: Գրքի սկզբում նկարված է հրեշ, այսինքն՝ տղան դեռ ճամփա չի ընկել դեպի հրեշների աշխարհ: Իսկ գքրի վերջին էջում արված նկարներից մեկը հենց այն հրեշներից մեկի նկարն է, որին նա հետո հանդիպում է այլաշխարհում: Հաշվի առնելով երկու նկարների նմանությունը՝ կարելի է ենթադրել, որ հեղինակը ընթերցողից ակնկալում է այն ընդունել որպես մտացածին աշխարհ: Ուշագրավ է նաև ժամանակի նկարագրումը հեքիաթում: Մաքսի յուրաքանչյուր ճամփորդություն հրեշների աշխարհից դեպի իրական աշխարհ տևում է ավելի քան 2 տարի, բայց վերդառանլուն պես նա իր սենյակում գտնում է տաք ճաշը, որը ևս մեկ անգամ փաստում է այդ ճամփորդության մտացածին լինելը:

Փոքրիկ Մաքսի այս անրջային ճամփորդությունը նրա համար խրատական է լինում: Իր սենյակից փախչել ցանկացող չարաճճի մանուկը մոր կողմից զրկվում է ճաշից, և նա ինքն իրեն պատկերացնում է որպես հրեշների աշխարհի արքա, և նա էլ հրեշներին քնելու է ուղարկում առանց ուտելու: Այս կերպ հեղինակը փորձում է պատկերել մանկան՝ մոր

նկատմամբ ունեցած վրդովմունքը. նա կարծես մոր վրեժը նրանցից է լուծում: Սակայն երկար ժամանակ այնտեղ մնալուց հետո, Մաքսը իրեն միայնակ է զգում և ցանկանում է մայրիկին ու իր սենյակը:

Max […] was lonely and wanted to be where someone loved him best of all. […] So he gave up being king of where the wild things are […] and sailed back […] into […] his very own room (M. Sendak: 1963).

Փոքրիկ տղայի համար այս երևակայական ճափորդությունը կյանքի նոր հեռանկար է բացում: Տղան միանգամայն փոխում է իր վարքագիծը, որն ընթերցողին է ներկայացվում նկարագրդրումների միջոցով: Ինչպես վեբ ծրագրավորող Ռ. Հոյթն է իր «Երևակայությունը «Այնտեղ որտեղ ապրում են հրեշները» հոդվածում գրում, թե «…ընդլայնվող նկարագարդրումները արտացոլում են Մաքսի հեռանկարների ընդլայնումը, և հավելում, - դիցաբանության մեջ և ժամանակակից դյութապատում երկերում տեղ գտած միստիկ պատումները կարող են կտրականապես փոխել աշխարհի նկատմամբ ունեցած մեր հայացքները» (Hoyt 2009), այդպես էլ Մ. Սեդակը փորձում է ներկայացնել առասպելական պատումների փոխակերպող ուժը և դրանցում երևակայության դերի կարևորությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Alcott L.M. (1911) *The Louisa Alcott Reader: A Supplementary Reader for the Fourth Year of School* Boston: Little, Brown and Company, https://archive.org/stream/louisaalcottrea00alcogoog#page/n10/mode/2up

*2.*Barett Deirdre (1991-92) *Through a Glass Darkly: Images of the Dead in Dreams* Omega – Journal of Death and Dying 24.2: 97-108. Web.

3.Carol Schreier Rupprecht and Bulkley Kelly (1993) *The Dream and the Text: Essays on Literature and Language*. New York: State University of New York Press, Print.

4.Dickens Ch. (1871) *A Child's Dream of a Star* Boston: Fields, Osgood & Co.

5.Goldberg Harriet (1983) *The Dream Report as a Literary Device in Medieval Hispanic Literature* Hispania 66.1.

6.Hieatt Constance B. (1967) *The Realism of Dream Visions: The Poetic Exploitation of the Dream Experience in Chaucer and his Contemporaries*. The Hague: Mouton & Co..

7.Freud S. (1920) *A General Introduction to Psychoanalysis* New York: Washington Square Press, Inc.

8.J.K.Rowling (1999) *Harry Potter and the Sorcerer's Stone* USA: Scolastic Inc.

9.J.K.Rowling (2000) *Harry Potter and the Chamber of Secrets* USA: Scolastic Inc.

10. J.K.Rowling (2005) *Harry Potter and the Half-Blood Prince* USA: Scolastic Inc.

11. Jung, C. G. (Translated by Hull, R.F.C.).*Dreams*. Princeton: Princeton University Press, 1974/

12. Kruger, Steven F. (1992) *Dreaming in the Middle Ages*. Cambridge: Cambridge University Press.

13. Poch, Helena and Daniel Walden (2003) *Psychoanalysis of Dreams: Dream Theory and Its Relationship to Literature and Popular Culture: Freud, Billy Joel, Appelfeld, and Abe,* Journal of Popular Culture, 113-120..

14. Sendak M. (1963) *Where the Wild Things are* USA: Harper Trophy

15. Hoyt R. (2009) *Imagination in Where The Wild Things Are* Web. http://journeytothesea.com/imagination-wild-things

Ի. Դաղյան

«Երազ» պատումային հնարի գործառութային դասակարգումը

Ամփոփում

Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվել գրական երազը դասակարգել ըստ գործառույթի՝ օգտվելով անգլերեն հեքիաթանյութից:

Գրական երազն ունի բազմաշերտ գործառութային դաշտ՝ պայմանավորված անրջային աշխարհին բնորոշ տարածաժամանակային համակարգի յուրահատկությամբ: «Երազ» պատումային հնարը հեղինակներին հնարավորություն է տալիս ազատ տեղաշարժվել տեքստում՝ կապելով միմյանց չառնչվող դրվագներ, ստեղծել կապ իրական և այլ աշխարհների միջև, գուշակել սյուժեի հետագա ընթացքը, խրատել հերոսներին և այլն:

И. Дадян

Функциональная классификация нарративного приема «сон»

Резюме

В рамках данной статьи сделана попытка классифицировать литературный сон в соответствии с его функциями, беря за основу английскую сказочную литературу.

Литературный сон имеет широкий спектр функций в тексте, обусловленный особенностью пространственно-временной системы, характерной для мира сновидений. Сон, как нарративный прием, позволяет авторам свободно перемещаться по тексту, соединять несвязанные друг с другом отрывки, создавать связь между реальностью и другими мирами, угадывать дальнейшее развитие сюжета, подать урок персонажам и т.д.

I.Dadyan

Functional Classification of “Dream” as a Narrative Device

Summary

Within the framework of this article, an attempt is made to classify literary dreams as per their functions using English children’s literature as a primary source.

Literary dreams fulfill a wide range of functions in the text conditioned by the peculiarity of the spatiotemporal system characteristic of dream worlds. “Dream” as a narrative device enables writers to freely move about the text and tie

together unrelated scenarios, establishing a link between the real world and other worlds and foreshadow some later events or revelations, teach characters a lesson etc.